ՍԱՀԱԿ ԱՄԱՏՈՒՆՈՒ ԱՐԽԻՎԸ

Սահակ Ամատունին ծնվել է 1856 թ., Աշտարակի շրջանի Օշական գյուղում, հողագործի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա ուսանել էջմիածնի ժառանգավորաց դպրոցում և ճեմարանում։ 1876 թ. ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1887-ին՝ արևղա, մտնում էջմիածնի միաբանություն։

1891 թ. նա նշանակվում է էջմիածնի մատենադարանապետ և սկսում ուսումնասիրել այնտեղ պահվող ձեռագրերը, ցուցակագրելով դրանք (կազմում է նաև Սևանի ձեռագրերի ցուցակը։ 1899 թ. Խրիմյան կաթողիկոսը նրան նշանակում է Շողակաթ վանքի վանահայր, ուր և միաժամանակ զբաղվում է հայկական շարականների ուսումնասիրությամբ և բառարանագիտությամբ։ 1906 թ. վերստին նշանակվում է մատենադարանապետ, իսկ 1908-ին՝ դառնում է էջմիածնի հոգևոր խորհրդի անդամ։ Սահակ Ամատունին Գևորգյան ճեմարանում դասախոսում է հայկական ձայնագրություն։ Նրան աշակերտում են Կոմիտասը և ուրիշներ։

1894—1906 թ. «Արարատում» լույս են տեսնում Սահակ Ամատունու մի շարք հայագիտական հետազոտություններ։ Այնուհետև առանձին գրքերով հրատարակվում են նրա «Հին և նոր անվավեր, անծանոթ շարականք» (1911), «Հայոց բառ ու բան» (1912), «Ի վերա լերանց խնկարերանց» (1913) և այլ հետազոտություններ։

Սահակ Ամատունին մահանում է 1920 թ. հունվարի 28-ին։ Նույն՝ 1920 թ. (հետմահու) էջմիածնի Մատենադարանում ստեղծվում է նրա արխիվային ֆոնդը։ Այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են հեղինակի անտիպ (և տպագրված) հետևյալ աշխատությունների ձեռագրերը. «Մնացորդ ի ժամագրոց Մովսէսի Քերթողահօր Սիւնեաց եպիսկոպոսի», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ Յոհաննու Իմաստասիրի», «Մեկնութիւն ժամագրոց Մեծին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի», «Յաղագս հիմնարկութեան եկեղեցւոյ Մեծին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի», «Հայոց գիւղերի և քաղաքների անուններ այբբենական կարգով», «Պատմութիւն Վաչականա և Անահտա», «Բաղդատութիւն Եղիշեի ձեռագրաց», «Ձեռագիր պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», «Ողևորութիւն տ. տ. Մկրտիչ վեհ. կաթուղիկոսի ամենայն հայոց Երուսաղէմից-էջմիածին» գրքի Ս. Ամատունու գրած առաջաբանը և այլն։

Նույն արխիվում են պահվում Ս. Ամատունու հեղինակած քարոզները, «Հոգևոր երգք», «Զայնագրեալ երգարան» աշխատությունները, նյութեր՝ «Հայոց բառ ու բան» բառարանի համար, «Շարականք Գրիգոր կաթողիկոսի Անաւարդեցւոյ», «Հին շարականներ՝ շարականների շուրջ նյութեր, «Շարական և ութ ձայնից կանոններ», «Սրգի նշանակութեան և երաժշտութեան վերայ տեղեկութիւն և ութն ձայներ» և այլ հետազոտություններ, դիտողություններ, երաժշտական խաղերի ու շարականների վերաբերյալ նյութեր։

Առ այսօր պահպանվում են Ս. Ամատունու բանաստեղծությունների և պաշտոնական գրությունների մատյանը, ծոցատետրը, «Հայոց բառ ու բան» բառարանի իր իսկ լրացրած օրինակը, «Ի գրոց Սահակ վարդապետ Ամատունւոյ» ժողովածուն, անձնական թղթերը, «Վարդգէս մանուկ, Շրէշ բլուր և Աղթամար բերդ» ուսումնասիրությունը։

Ս. Ամատունու կյանքն ու գործունեությունը քննողի համար արժեքավոր փաստաթղթեր են անվանի հայագետի արխիվում պահվող իր իսկ վկայականները, պաշտոնավարության հրամանները, պարգևատրման այլևայլ գրությունները, բազմաթիվ դիմումները և այլն։

Նկարագրվող արխիվում զգալի թիվ են կազմում և հայագիտության համար այսօր էլ արժեքավոր են Ս. Ամատունու նամակները՝ հասցեագրված Հ. Հովհաննիսյանին, Ն. Ադոնցին, Մ. Օրմանյանին, Կ. Կոստանյանին, Վ. Փափազյանին, Գ. Խալաթյանին, Ն. Ակինյանին, Խրիմյան Հայրիկին, Տիրայր վարդապետին, Գ. Հովսեփյանին, Ս. Մանդինյանին, Մեյեին, Գր. Աղափերյանին, Ս. Պարոյանին, Հ. Արշարունուն և այլոց։

Նույն արխիվում պահվում են նաև ուրիշ հեղինակների զանազան հետազոտությունների ձեռագիր օրինակները։

Ամատունու արխիվում նյութեր կան ժամանակի խմբագրությունների, միաբանությունների, զանազան գիտական հաստատությունների, Գևորգյան ճեմարանի, վանքերի, եկեղեցիների և այլ հաստատությունների ու հարցերի վերաբերյալ։

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ